

Գազա, Ագոլսոս, Ասկադոն, Գեք, Ակկարոն (ԺԳ. 3): Փղշտացիք եթովպական ցեղէ էին և գաղթած Բէլուզէն, և յարձակած Քանանու այն մասին վրայ՝ ուր այն ատեն կը բնակէին Խեաքիք:

Այս պատմական ծանօթութիւնը տալէ վերջ, այժմ պիտի յիշենք Յոպպէէն Գազա ճանապարհին վրայ գտնուած, և քրիստոնէացած գլխաւոր քաղաքները և անոնց աւանդութիւնները: Մինչև է. դար նոյն քրիստոնէական շրջանակը ծաղկեալ վիճակ մը ունէր: Արաբական արշաւանքները աւերակի վերածեցին նոյն տեղերը, ինչպէս կը հաստատեն պատմութիւնը եւ հնախօսութիւնը:

Առաջին քաղաքն է Եսպլեհէ, որ քանանական Եսպլեհէն է. հռովմայեցիներու օրով ան կը կոչուէր Յամնիա (Jamnia), և այնքան բազմամարդ էր այն ժամանակ որ շրջակայ գիւղերով միասին քառասուն հազար զինուոր կը պատրաստէր: Այս քաղաքը քրիստոնէութեան առաջին դարերուն եպիսկոպոսներ ունեցաւ. անոնցմէ մին՝ Պետրոս ներկայ գտնուեցաւ Նիկիոյ ժողովին: Գ. դարուն աւելի ծաղկեալ վիճակ մը ունէր(*), արաբական արշաւանքին ժամանակ Յամնիա անշքացաւ (Mis. Բ. 179): ԺԲ. դարուն Խաչակիրները գիւղ մը միայն գտան հոն, զայն անուանեցին Jbelin, անուն մը որ կրնայ յառաջ եկած ըլլալ Jebnaèէն: Ֆուլք՝ Երուսաղէմի չորրորդ թագաւորը բերդ մը շինեց հոն, արգիլելու համար Ասկաղոնացիներու յարձակումները դէպի հիւսիս: Jbelin աւատը եղաւ Balian ազնուականներուն (Bar. gd. էջ 502):

(*) Նոյն դարուն Եւփիիոսի աւակերսներէն Մելիսիսեցի հայազգի Սեփանոս՝ Եպիսկոպոս կը ձեռնադրուի Յամնիայի եւ կը վարէ տեղւոյն եկեղեցիին գործերը (Հ. Վ. Ե. էջ 338):